ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 27/2021

ՀՀ, ք. Երևան 23 դեկտեմբերի 2021թ.

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ այսուհետ՝ «Մասնակից-1», ի դեմս տնօրեն՝ Արմեն Բաղալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Քարավան»** ՍՊԸ-ի այսուհետ՝ «Մասնակից-2», ի դեմս տնօրեն Հակոբ Հակոբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով ՀԳ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ և «Քարավան» ՍՊԸ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին,

1. **Պայմանագրի առարկան՝**
   1.1 Սույն պայմանագրով Մասնակիցները պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու համար՝ իրականացնելով S-8-93, Լծեն-Տաթև ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքները և դրանց ընդունումից հետո երաշխիքային սպասարկումը (այսուհետ՝ Աշխատանք) հետևյալ համամասնությամբ՝
   - Պայմանագրով նախատեսված աշխատանքները 9+500կմ - 19+889կմ հատվածում իրականացնում է Մասնակից 1-ը,
   - Պայմանագրով նախատեսված աշխատանքները 0+000կմ - 9+500կմ հատվածում իրականացնում է Մասնակից 2-ը:

2. **Ընդհանուր գործեր վարելը՝**
   2.1 Մասնակիցները գործունեությունը վարում են համատեղ:

3. **Գումարի բաշխումը՝**
   3.1 Մասնակիցներից յուրաքանչյուրը վարձատրվում և ներկայացնում է կատարողական ակտեր՝ Պայմանագրի 1.1 կետով սահմանված համամասնությանը համապատասխան:

4. **Կատարված աշխատանքի երաշխիք՝**
   4.1 Մասնակիցները Աշխատանքի նկատմամբ երաշխիքային սպասարկումը իրականացնում են իրենց կողմից կատարված Աշխատանքի տվյալ հատվածին համապատասխան:
   4.2 Աշխատանքների կատարման համար տրվող կանխավճարը Մասնակիցների միջև բաշխվելու է Մասնակից-1 48.52% (քառասունութ ամբողջ հիսուներկու), Մասնակից-2 51.48 % (հիսունմեկ ամբողջ քառասունութ) համամասնությամբ:
   4.3 Մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից ներկայացվելու է Աշխատանքների որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովման բանկային երաշխիք՝ Մասնակից-1 48.52% (քառասունութ ամբողջ հիսուներկու), Մասնակից-2 51.48 % (հիսունմեկ ամբողջ քառասունութ) համամասնությամբ:

5. **Մասնակիցների պատասխանատվությունը՝**
   5.1 Մասնակիցների պատասխանատվությունը բաշխվում է հետևյալ հարաբերակցությամբ՝
   - Մասնակից-1՝ 48.52%,
   - Մասնակից-2՝ 51.48%:

   5.2 Պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մասնակիցներից յուրաքանչյուրը պարտավոր է հատուցել մյուս Մասնակցին պատճառված վնասները՝ իր կողմից չկատարված Աշխատանքի ծավալին համապատասխան չափով:
   5.3 Պայմանագրից ծագող պարտավորությունների համար Մասնակիցներից յուրաքանչյուրի պատասխանատվության բաշխումը իրականացվում է Պայմանագրի 1.1 կետով սահմանված համամասնությանը համապատասխան:

6. **Մասնակիցների ընդհանուր գույքը՝**

6.1 Սույն պայմանագրի գործողության ողջ ընթացքում Մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից ներդրված գույքը հանդիսանում է տվյալ Մասնակից սեփականությունը, որը պահպանվելու է նաև սույն պայմանագիրը դադարելուց հետո:

6.2 Մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից ներդրված գույքի պահպանման հետ կապված ծախսերը կատարում է տվյալ գույքի սեփականատերը:

7 **Պայմանագրի գործողության ժամկետը և վեճերի լուծման կարգը՝**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը: Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմին՝ դուրս գալու օրվանից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ և հատուցի Մյուս կողմին, Պատվիրատուին կամ այլ երրորդ անձանց Աշխատանքների չկատարման հետևանքով Պայմանագրի շրջանակներում առաջացած ծախսերը և վնասները:

7.2 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը կողմերը կլուծեն բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

8 **Այլ պայմաններ՝**

8.1 Կողմերից յուրաքանչյուրն, անկախ այն բանից, լիազորված է Պայմանագրով ընդհանուր գործերը, թե ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

8.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են կնիքներով:

8.3 Կողմերը պարտավոր են սույն պայմանագրով սահմանված իրենց վավերապայմաններից յուրաքանչյուրի փոփոխման դեպքում անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև սույն պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ և մեկ օրինակ ներկայացվելու է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

«Մասնակից-1»	«Մասնակից-2»
«Ա.Ա.Բ» Պրոեկտ» ՍՊԸ	«Քարավան» ՍՊԸ
ՀՎՀՀ 00250339	ՀՎՀՀ 90012365
ՀՀ, Երևան, Արաբկիր 39/1ա	ԼՂՀ, Ասկերանի շրջ., գ. Բերքաձոր
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ
ՀՀ 2470100091880010	ՀՀ 1150012884694606
Արմեն Բաղդասյան	Հակոբ Հակոբյան
Տնօրեն	Տնօրեն

«ՔԱՐԱՎԱՆ»
"KARABAH"
90012365